ՆՈՐ-ԴԱՐ

№ 7 ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 14 Յունուարի 1900 Ուրբաթ, 14 Յունուարի ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 7

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis. Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., բեկյամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Ոյժը և իրաւունքը։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.— Պետերբուրգից։ Նուխուց։ Շուշուց։ Սարիղամիշից։
Թղթակցութիւններ.— Կարսից։ Վաղարշապատից։ Նամակ Փրանսիայից, Պարիզ։
Քաղաքական.—Պատերազմը։
Հեռագրներ։
Ֆէլիէտօն.—Գաղտնի կղզի։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 13 յունուարի 1900 թ.

ՈՅԺԸ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Դրայֆուսի գործից յետոյ Հարաւային Աֆրիկայում տեղի ունեցող պատերազմն է, որ ամբողջ աշխարհի մտքերը լարել է, և ամենքն ու ամեն երկրում մեծ հետաքրքրութեամբ սպասում են Հարաւային Աֆրիկայից ստացւող հեռագրներին և սրտատրոփ կարդում են պատերազմի վերաբերեալ լուրերը։

Բայց պէտք է ասել, որ ոչ մի պատերազմի մասին ստացուած հեռագիր այնքան անհասկանալի, հակասական, մտքերը շփոթող, տարակուսանք յարուցանող բնաւորութիւն չէ ունեցել, ինչ որ այն հեռագրները, որոնք ստացւում են անգլիական զօրապետների ստորագրութեամբ։

Վերջին հեռագրներն ըստ երեւոյթին ցոյց են տալիս մեզ, որ բաղդի անիւն անգլիացիների օգտին է շուռ եկել, անգլիական զօրքերը յառաջ են ընթանում, Տուգելա գետի միւս ափն են անցել Բուլլերի հրամանատարութեան տակ գտնւող զօրքերի մի մասը հէնց այն միջոցին, երբ բուրերը միամտաբար Տուգելա գետում լողանալիս են լինում. ի միջի այլոց և լուր տարածուեցաւ, որ Լեդի Սմիթը պաշարումից ազատուած է... միով բանիւ, ըստ երեւոյթին, անգլիացիներն առաջ են գնում։

Բայց այդ ամենն ըստ երեւոյթին այդպէս է, որովհետև Լեդի Սմիթը դեռ չէ ազատուած պաշարումից, ինչ է ազատուել, գրանով բուրերը չյաղթուեցան, և վերջապէս բուրերի նահանջ տալը և լռութիւնը դեռ անգլիական զօրքերի յաղթութեան ապացոյց չէ։ Եթէ անգլիացիները մի որ և է նշանաւոր քայլ կատարած լինէին, ահագին աղմուկով կծանուցանէին այդ. անգլիացիների կողմից պահպանուած համեստութիւնը, և պատերազմի մասին ստացուած կցկտուր և կարկատած, անշան լուրերն ապացուցանում են, որ անգլիական զօրքը դեռ ոչինչ չէ կատարել յիշատակութեան արժանի, և թէ նշանաւոր և վճռական պատերազմներն ապագայում են տեղի ունենալու։

Հարաւային Աֆրիկայի պատերազմը մտել է իր երրորդ շրջանը. առաջին երկու շրջանում անգլիացիները չարաչար պարտութիւն կրեցին։ Անգլիան իր բոլոր ոյժերը հաւաքել է Հարաւային Աֆրիկա և ինչ որ քիչ շատ յայտնի զօրապետներ ունի, բոլոր էլ ուղարկուած են Հարաւային Աֆրիկա։

Անգլիան, խիստ նեղն ընկած, ուզում է ջարդել և ոչնչացնել իրենց ազատութեան և իրաւունքների համար կռւող մի բուռն ժողովուրդ, և յոյս ունի իր նպատակին հասնելու—փողով և ժամանակով։

Անգլիան ամենահարուստ երկիրն է. նա կարող է նաւերով, վարձու զինուորներով և զէնքով ու թնդանօթներով լցնել Հարաւային Աֆրիկայի ծովեզերքը և Տրանսվաալը ...Ի՞նչ կարող է անել մի փոքրիկ հասարակապետութիւն, մի բուռն ժողովուրդ. ի հարկէ վերջ ի վերջոյ պէտք է ընկճուի։

Այսպէս է մտածում և Չեմբերլէնը, Հարաւային Աֆրիկայի պատերազմի գլխաւոր հեղինակը։

Բայց Աստուած մեծ է, և բուրերը քաջ են ու պատրաստ մինչև իրենց վերջին շունչը կռուելու արդար գործի, իրենց հայրենիքի համար, իրենց կողմն ունենալով ամբողջ լուսաւոր աշխարհի և բոլոր ազատութիւնների համակրութիւնը։

Անգլիացիները Հարաւային Աֆրիկայում պարտութիւն կրելով առաջ կոխեցին քսաներորդ դարը։

Անգլիացիներն այդ դարի մէջ միջոց կունենան ճանաչելու և ուրիշի իրաւունքը։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ներքին գործերի մինիստրութիւնն այս տարի Կովկասի կառավարչապետի տրամադրութեան տակ է դրել 250,000 ր. Անդրկովկասում եղջերաւոր անասունների ժանտախտի դէմ կռուելու համար։

— Թիֆլիսում մի ընկերութիւն է կազմւում օգնելու համար կայսրութեան բոլոր համալսարանների այն չքաւոր ուսանողներին, որոնք աւարտել են Կովկասի միջնակարգ դպրոցները։ Ներկայումս մշակւած է այդ ընկերութեան կանոնադրութեան ծրագիրը, որը կառաջարկւի ուր հարկն է ի հաստատութիւն։

— Բիբի-Հէյբաթում անցած տարուայ փետրւար ամսին կապալով վերցրած արքունական նաւթային գետինների շահագործումը մի քանի նաւթարդիւնաբերողների համար վնասաբեր է հանդիսանում կապալի գինը բարձր լինելու պատճառով. այդ պատճառով յիշեալ կապալառու նաւթարդիւնաբերողներն ուր հարկն է յայտարարութիւններ են տալիս, որոնցով հրաժարւում են իրենց վերցրած գետիններից օգտուելու իրաւունքից։

— Կայսր Ալեքսանդր III-ի անուան մրցանակներ են հաստատուած խաղողի ամենալաւ այգիների և գինիների համար։ Այս տարի մրցանակ է նշանակւած Ռուսիայի խաղողի ամենալաւ այգու համար։ Մրցանակը 3,000 ր. է։ Մրցանակաբաշխութեան մասնակցելու համար ցանկացողները յայտարարութիւն պիտի տան մինչև եկող փետրւարի 1-ը երկրագործութեան դեպարտամենտին, որտեղից և ուղարկւում են մրցանակաբաշխութեան կանոնները։

— Սեւաստոպոլի քաղաքային վարչութիւնը խնդիր է յարուցել մի ակցիոներական ընկերութիւն հիմնելու՝ Սեւաստոպոլում շինելու և շահագործելու համար ծովային տաք լողարաններ, որպիսի լողարաններ գոյութիւն ունին արտասահմանում։

— Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է՝ հէնց որ եղանակները լաւանան, քարել տալ Դվորցովայա փողոցն ու Միքայէլեան կամուրջների միջև գտնուած փողոցը քառանկիւնի քարերով։

—Թիֆլիսում նոր կազմուած Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան օգտին պարահանդէս է լինելու յունուարի 16-ին, կիրակի երեկոյեան, Թիֆլիսի ժողովարանում։

— Յունուարի 12-ին երեկոյեան Թիֆլիսում վախճանւեց վրաց «Կվալի» պատկերազարդ շաբաթաթերթի խմբագիր Գէորգի Ծերեթելին։ Հանգուցեալը եօթանասնական թւականների վրաց ընտիր և համեստ գործիչներից մէկն էր։ Գ. Ծերեթելին վրաց և տեղական ռուսաց թերթերում աշխատակցել է և իր հրապարակախօսական գործունէութեան ասպարէզում միշտ հաւատարիմ է մնացել իր իդէալներին, այն է՝ ծառայել իր ազգի իսկական շահերին։ Հանգուցեալը թշնամութիւն չէ գրգռել հայերի դէմ, ընդհակառակը միշտ աշխատել է սերտ յարաբերութիւն հաստատելու միմեանց հետ Կովկասում ապրող ժողովուրդների մէջ, ընդունելով որ խաղաղութեամբ և սիրով ու համերաշխութեամբ միայն կարելի է Կովկասի լուսաւորութեան գործն առաջ տանել և կուլտուրական ցանկալի աստիճանին հասնել։

— Գ. Եզոր Կարապետեանը Մոսկուայից, ինչպէս ամեն տարի, 5 օրինակ «Նոր-Դար»-ի բաժանորդ գրւելով, չորս օրինակը թողել է խմբագրութեանս կարգադրութեանը՝ ուղարկելու այդ չորս օրինակը թերթի պահանջ ունեցող, բայց վճարել չկարողացող հաստատութիւններին։

— Գ. Առաքել Ծատուրեանը տասը օրինակ «Նոր-Դար»-ի բաժանորդ գրւելով, ինչպէս ամեն տարի, չորս օրինակը թողել է խմբագրութեան կարգադրութեանը։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ.—Անցեալ դեկտեմբերի 21-ին, գիշերուայ ժամը $11^1/_2$-ին, սրտի պայթելուց վախճանուեց 60 տարեկան հասակում տեղիս հայոց եկեղեցու երէցփոխ Նիկողայոս Թաղիանոսեան։ Հանգուցեալը 15 տարի ձրիաբար ծառայել է եկեղեցուն։ Նա ծառայում էր արդարադատութեան մինիստրութեան մէջ, որտեղից և ուղարկեցին թաղման համար 250 ր.։ Հանգուցեալը թողել է կտակ, բայց մինչև օրս յայտնի չէ, թէ կտակի մէջ ինչ կայ։ Նա անցեալ տարի Երևանում ամուսնացաւ 16—17 տարեկան մի օրիորդի հետ։ Վերին աստիճանի ժլատ մարդ էր հանգուցեալը։ Մահուանից առաջ՝ նստած շնորհաւորական նամակներ էր գրում. երկու նամակ գրեց վերջացրեց. երկրորդ նամակում երբ ստորագրել էր ազգանունը՝ Թաղիանոսեանց ց տառը գզգզուած մնաց, գրիչը ձեռքին վայր ընկաւ, ու այնպէս մնաց։

ՖԷԼԻԷՏՕՆ

ԳԱՂՏՆԻ ԿՂԶԻ*)

(Դէպի անասունների աշխարհն իմ կատարած ակամայ ուղևորութեան յիշողութիւններից)

Երեկոյեան բարեկամս, ինչպէս խոստացել էր, եկաւ մօտս։ Սեղանատանը նստած՝ թէյ էի վայելում։

—Միթէ այս երեկոյ անպատճառ պիտի գնանք պ. Սամոյլի մօտ,— հարցրի ես։

—Անպատճառ,—պատասխանեց բարեկամս,—մեր փաստերը պիտի արձանագրենք և նրանց պաշտօնական ձև տանք։ Կուզես դու մնա։

—Ինչո՞ւ, ես կըգամ անպատճառ։

Հագնուեցանք և դուրս եկանք փողոց։ Կառք նստելով, բարեկամս փայտի ցեխոտ ծայրով խփեց կառապանի թևին. այդ նշանակում էր, թէ՝ քշի։

Մօտ երկու ժամ կառքը թաշկոտում էր խորթ ու բորթ փողոցներով, մինչև որ հազիւ հազ արժանացանք պ. Սամոյլի տանը հասնելու։ Թէպէտ այդ տունը քաղաքի հեռու ու խուլ անկիւնումն էր, բայց շատ գեղեցիկ շէնք էր։

Կառքից իջնելով և կառքն արձակելով, մտանք պ. Սամոյլի տունը։ Նախասենեակում վերարկուները հանելով անցանք փառաւոր զարդարուած դահլիճը, որ արդէն ժողովուած էին թէ ֆինանսական և թէ փողոցները մաքրող յանձնաժողովի անդամները։

—Մենք ձեզ էինք սպասում, հա՛, հա՛, հա՛,— բաքբաց պ. Խողը, որը, առհասարակ, միշտ ուրախ և ինքնագոհ զւարթութեան մէջ էր դռնչում և տխրել կամ մտածել ասուած բանը չգիտէր ամենևին։

—Ահա և ես,—ասաց բարեկամս ամենքին բարև տալով։ Ես ևս հետևեցի նրա օրինակին։

—Յարգելի անասուններ,—ասաց պ. Սամոյլը,—արձանագրութիւնը պատրաստ է, կարող էք ստորագրել։

Այստեղ մի փոքրիկ վիճաբանութիւն բացուեց։ Պ. Սամոյլն ուզում էր, որ նախ ստորագրեն ու ապա խաղան, այն ինչ՝ յանձնաժողովների անդամներն առաջարկում էին նախ նստել սեղանների շուրջն ու յետոյ խաղը վերջանալուն պէս, ստորագրել, առարկելով որ մատները սառած են, պիտի նախ երակները տաքացնել։ Մեծամասնութիւնը, ի հարկէ, յաղթանակը տարաւ։ Այնուհետև նստեցին սեղանի շուրջը, որ խաղալու թղթերից մի աշտարակ էր կանգնեցրած, և սկսուեց մի զւարճ և անմեղ խաղ։

Մինչ նրանք խաղում էին (ես չէի մասնակցում, որովհետև բարեկամս ասաց, որ դա պաշտօնական խաղ է, այսինքն նիստերի շարունակութիւնն է), ես վերցրի արձանագրութիւնները և սկսեցի կարդալ։ Առաջ բերեմ մի երկու կտոր այդ արձանագրութիւններից, որոնք, կարծեմ, ոչ ոքին վնաս պատճառել չեն կարող.

«...Յանձնաժողովս, դիտելով քաղաքի հիւսիսային, հարաւային, արևելեան, արևմտեան և կեդրոնական բոլոր փողոցները, գտաւ մաքուր և շատ օրինաւոր դրութեան մէջ։ Վասն որոյ առաջարկում է յայտնել պ. Սամոյլին խորին շնորհակալութիւն»։

Այդ գրում էր փողոցները մաքրող յանձնաժողովը։ Իսկ ահա, թէ ինչ էր գրում ֆինանսական յանձնաժողովը.

«...Դիտելով և ստուգելով տեղն ու տեղը ցոյց տրուած բոլոր հաշիւներն ու ծախսերը, յանձնաժողովս գտաւ այդ ամենը ոչ միայն համապատասխան կատարուած գործերին, այլ և այն, որ յատկացուած գումարները շատ քիչ են, համեմատած այն հսկայական առաջադիմութեան հետ, որն արուած է փողոցները մաքրելու և սալայատակելու գործում։ Ուստի յանձնաժողովս առաջարկում է քաղաքային խորհրդարանին, որ պ. Սամոյլին տարեկան գումարի վրայ աւելացնի պարգևել մի չնչին գումար—2,000 ր., որպէս զի նա միւս տարին էլ վնաս չկրի իր սեփական գրպանից աւելորդ փող ծախսելով»։

Այդ արձանագրութիւնները շատ երկար էին և խիստ հետաքրքրական, այնպէս որ կարդալիս չիմացայ, թէ ինչպէս ընկղմուեցի խորը քնի մէջ։

Ինձ զարթեցրեց աթոռների դղրդոցը. և աչքերս բանալով տեսայ, որ խաղը վերջացել է, և ամենքը սեղաններից վեր են կենում։ Մօտենալով, իմացայ խաղի արդիւնքը։ Երկու յանձնաժողովների ամեն մի անդամ շահել էր երեք հարիւրական րուբլի։ Խողրեմ՝ չզարմանաք. եթէ դուք էլ այդպիսի յանձնաժողովների անդամ լինէիք, ձեզ էլ կարող էին պատահել այդպիսի արտակարգ աջող դէպքեր. այդ ձեռնից կլինի կախուած։

—Այժմ ստորագրենք,—առաջարկեց բարեկամս։

—Ստորագրենք,—խռխռացին, արդալացին, կլաւեցին անդամները։

Այդ էլ վերջանալուց յետոյ, տանտէրը սիրալիր կերպով մեզ հրաւիրեց ընթրիքի սեղանի, որ արդէն պատրաստ էր։ Ընթրիքն անցաւ շատ ուրախ. կերակուրները մէկը միւսից համեղ, խմիչքները ընտիր։ Բազմաթիւ կենացներ խմուեցին, գլխաւորապէս այն ոչխարների կենացը, որոնք թոյլ են տալիս իրենց բուրդը խուզել։

Գիշերուայ ժամը երեքն էր, երբ ընթրիքը վերջացաւ։

Յանձնաժողովների նախագահները, որոնք էին՝ ֆինանսականինը՝ Աղուէս բարեկամս, իսկ փողոցները մաքրողինը՝ պ. Խողը, վերցրին արձանագրութիւնները և ամենքս մնաս բարև ասելով հիւրասէր տանտիրոջը դուրս եկանք փողոց։

*) Տես «Նոր-Դար» 1899 թ. № 223

ՇՈՒՇԻՑ.—Յուն. 8 ին Յակովբ Ճաղարբէգեանի մարմինը Խանբենդ աստնից բերին իւր հայրենի քաղաքը Շուշի և Թաղեցին Ներքին հանգստարանում, Ոչ ոք չէր կարծում, Թէ հանգուցեալի մարմինը պէտք է տեղափոխեն հայրենի քաղաքը· Թաղման օրը շատ քիչ մարդ կար հանգուցեալի դագաղի վրայ։

—Յուն. 4-ին հոգևորդպրոցի դահլիճում աշակերտները խաղացին Սունդուկեանցի «Պէպօ»-ն և «Բռնի ամուսնութիւն» վոդվիլը: Խաղը յաջող անցաւ։ Կանացի դերեր աշակերտներն էին խաղում։ Մուտքը ձրի էր՝ միայն տոմսակներով։ Դահլիճը ծայր ի ծայր լիքն էր հասարակութեամբ։ Այսօր երեկոյեան ևս պէտք է լինի աշակերտական երկրորդ ներկայացումը նոյն դպրոցի դահլիճում։ Յուն. 2 ին տօնածառ էր սարքուած օրիորդաց դպրոցի դահլիճում, ուր ներկայ էին աշակերտուհիների ծնողները և կողմնակի հասարակութիւն երկու սեռից։ Տօնածառը հանդիսաւոր անցաւ. կենդանի պատկերներ էլ կային։ Մուտքը ձրի էր։

—

ՆՈՒԽԻՑ.—Վաղուց էի լսել, որ տեղիս յաջորդի և երէցփոխանների կարգադրութեամբ խմբապետ հրաւիրուած է պ. Վ. Սարեան, որպէսզի եկեղեցու ներդաշնակ երգեցողութիւնից կրօնական մխիթարութիւն ստանայ ժողովուրդը և աւելի մեծ չափով յաճախի եկեղեցի։ Ճրագալոյցի գիշերը ներկայ եղայ ս. Մինաս եկեղեցում, ուր տեղ երգում էր 40 հոգուց բաղկացած երկսեռ քառաձայն խումբը։ Պատարագն սկսուեց «օրհնեցէք, գովեցէք»-ով, որի ներդաշնակութիւնը միանգամայն սրբազան սարսուռ էր ազդում ունկնդիրին։ Եկեղեցում ժողովրդի ծով էր կանգնած. խմբի ներդաշնակութիւնը Եկմալեանի մեթոդով էր. սրա «սուրբ սուրբ»-ը և «Հայր մեր»-ը, որոնց գովեստը մինչև օրս լոկ լրագրական էջերումն էի հանդիպել՝ նոյնն իրականութեան մէջ տեսայ։ Հիանալի էր մանաւանդ Բ2 «Ամէն Հայր սուրբ»-ը, որը սոլօ էր երգում օրիորդ Նասիբեան իւր կանոնաւոր և լիակատար ձայնով։ Ուրախալի է, որ այսպիսի մի յետ ընկած գաւառական քաղաքում նշմարւում են տիկնայք և օրիորդներ, որոնց սիրալիր մասնակցութիւնն այսպիսի դէպքերում պսակւում է յաջողութեամբ։ Որքան կարողացայ իմանալ, օրիորդներին և տիկնանց խրախուսողը դէպի այս գեղեցիկ գործը՝ եղել է տիրուհի Վարվառէ Ապրէսեան, որին պէտք է ցանկալ աւելի եռանդ և գործունէութեան նոր ասպարէզ ապագայում։ Թող Նուխին օրինակ լինի մեր միւս հայաբնակ գաւառական քաղաքներին, ուրտեղ եկեղեցական երգեցողութիւնը միանգամայն անհոգութեան է մատնուած։

—

ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ.—Ախալքալաքի գաւառի երկրաշարժից վնասուածների օգտին մեր տանուտէր Մ. Իսահակեանը մի ժամուայ ընթացքում հաւաքեց 144 ր. և գումարը յանձնեց տեղիս գաւառապետ պ. Ինժաւենսկուն, որ ուղարկի ուր հարկն է։

—Այս տարի Սարիղամիշում չտեսնուած ցրտեր են լինում. այդ պատճառով Թանկութիւնը տիրել է մեր հրապարակի վրայ սարսափելի կերպով Բաքէնի ճանապարհն էլ փակուել է արդէն առատ ձիւնով։ Տաւարի և ոչխարի մսի ֆունտը—7 կ., ալիւրի պուդը—1 ր. 70 կ., հալած իւղի ֆունտը—40 կ., 100 ձուն—1 ր. 50 կ., փայտի սաժենը—24-25 ր.։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՐՏԱՆ (Ախալքալաքի գաւառ), 27 դեկտ.—«Նոր Դար»-ի վերջին համարներից մէկում կարդացինք՝ «Բժշկական դեպարտամենտը Կովկասի բժշկական վարչութիւններին առաջարկել է տեղեկութիւններ հաղորդել այն գիւղերի մասին, ուր ցանկալի է ֆելդշերական կեդրոններ հիմնել բնակիչներին բժշկական օգնութիւն հասցնելու համար»։ Յոյժ ցանկալի էր, որ այն վարչութիւնը, որին յանձնուած է այդպիսի տեղեկութիւններ հաղորդել մեր գաւառից, ի նկատի ունենար նաև մեր գիւղը, որն ամենից մեծ գիւղն է գաւառիս մէջ և կեդրոն է համարւում շրջակայ գիւղերին։ Այս գիւղը քաղաքից 27 վերստ հեռու լինելով, ոչ մի դէպքում չի կարողացել օգտուել բժշկական օգնութիւնից. բժշկի մի անգամուայ այցը 10 րուբլուց պակաս չի նստիլ. ուստի ակներև է, որ աղքատ դասակարգը չի կարող այդ ծախսն անել և բժիշկ կանչել իւր հիւանդի համար, իսկ միջակ և հարուստ դասակարգից մի քանիսն են միայն դիմում բժշկի, և այն՝ այնպիսի դէպքում, երբ հիւանդի հիւանդութիւնը հասած է լինում իւր գագաթնակէտին և մինչև բժշկի գալն ու դեղօրայք բերել տալը, որ տևում է 2—3 օր, հիւանդը բնականաբար վերադարձած է լինում կամ դէպի այս և կամ դէպի հանդերձեալ կեանքը։ Իսկ ֆելդշերական կայարան լինելու դէպքում, ամեն հիւանդ կարող է իւր ժամանակին ստանալ բժշկական օգնութիւն։

Ֆելդշերական կայարան լինելու միւս գլխաւոր օգուտն էլ այն կլինի, որ վարակիչ հիւանդութիւններ եղած դէպքում իսկոյն հոգ կըտարուի շուտով առաջն առնելու, որպիսի հոգատարութիւն չի եղել մեր գիւղում, բացի մի ծայրայեղ համաճարակից։ Մի տարուց աւելի էր, որ այստեղ կար մի տեսակ վարակիչ ծանր հիւանդութիւն, որը Թէև զոհեր քիչ էր տանում, բայց ո՛ր տանը որ յայտնուէր, այն տան անդամներից շատ քչերը բաղդ կունենային զերծ մնալու նրա ուժգին կամ Թոյլ հարուածներից, բայց և այնպէս ոչ ոք չէր դիմում բժշկի, միայն անցեալ ամառ մինը՝ չկարողանալով տանել իւր հիւանդների յուսահատ դրութիւնը՝ հրաւիրեց քաղաքից զինուորական բժշկին, որը յայտնեց, Թէ այդ հիւանդութիւնը տիֆ է երկու տեսակ՝ բծաւոր և հասարակ, և հիւանդները խնամելու համար մի քանի պատուէրներ տուեց, գլխաւորապէս վարակման առաջն առնելու համար. բայց ո՞վ է անողը։ Բարեբաղդաբար, այս աշնան վերջերին ինքն իրան դադարեց այդ հիւանդութիւնը։

Ամսիս 19-ի երկրաշարժն այստեղ ևս զգալի եղաւ ուժեղ ցնցումներով, մանաւանդ առաջինը, ժամը 2-ինը. բարեբաղդաբար ոչ մի վտանգ չպատահեց. բայց գաւառիս միւս մասի գիւղերում պատահած աղէտների սրտաճմլիկ լուրերը ճնշող ապաւորութիւն են գործում հասարակութեան վրայ։

***

ՎԱՐԴԱՇԷՆ (Նուխու գաւառ), 1 յունուարի.—Փոստային ճիւղի այստեղ բացումից երեք ամիս է անցել Թէև, բայց այս կարճ ժամանակամիջոցն իսկ պարզապէս ցոյց տուեց, որ Վարդաշէնում նրա բացումը վաղուց էր անհրաժեշտ։ Թէև կային անձեր, որոնք իրենց տգիտութեամբ կամ անձնական շահերից դրդուած և կամ կուսակցական ոգով խոչընդոտ էին հանդիսանում այս յառաջադիմական քայլին, սակայն այսօր ամեն մի վարդաշէնցի օրհնում է այդ գործի սկզբնապատճառ եղողներին։ Ամեն մի համայնքի մէջ կան որոշ տիպի անհատներ, որոնք պատրաստ են իւրաքանչիւր մի հանրօգուտ գործում (ուր ժողովրդական մի քանի կոպէկների զոհողութիւն է պահանջւում) աղմուկ հանել՝ ամբոխի աչքում հանրական շահերի պաշտպան հանդիսանալով, Թէև այդ անձերն իրենք են ժողովրդի անխիղճ տզրուկը, նրա արիւն քամողը։ Մօտ հազար ծուխ ունեցող Վարդաշէնը փոստատան ճիւղի բացման համար պիտի տար ընդամենը մօտ երեք հարիւր րուբլի, մի չնչին գումար. բայց ահա գլուխ բարձրացրին «իշխան» տզրուկները ամբոխի ականջին շշնջալով Թէ՝ «Վարդաշէնի գործարանատէրերը քանդեցին ժողովրդի տունը», «մեզ ինչ հարկաւոր է փոշտը», «փոշտը մեր ոտքերն է, երբ ուզեմ՝ կըվազեմ քաղաք» և այլն. և այդպէս խօսողները նրանք են, որոնք 1 սայլ խոտ ունենալով Սարգսի տանը Մարկոսին են տալիս, որոնք մի բաժակ օղիով որբևայրի կնոջ միակ կթան կովը հրապարակ են քաշում, որոնք աղքատ գիւղացու արիւն-քրտինք աշխատանքից եղած պետական հարկը ժողովելով հարիւրներ են կլանում, որոնք պարզմիտ գիւղացուն բարեբար ձեռնտալով 24—30% տոկոսով «ձեռաց պարտք» են տալիս, ու ապա մի քանի ամսից խեղճի այգին խլում և մէջը «քարվանսարայ» շինում, որոնք ամեն տարի հարկերի բաժանման միջոցին հարիւրներ զանազան ծախքեր են հաշւում, բայց փողն իրար մէջ բաժանում։ Սակայն, ինչպէս երևում է, հասել է այդպիսիների ժամը. դրանց բերնին այլ ևս ականջ դնող չկայ. ամենքն արդէն հասկացել են դրանց վնասակար էութիւնը։

Փոստային ճիւղի բացումով վերացան նախ պետական հարկերը Նուխու գանձարան հասցնելու համար ցարդ եղող ահագին ծախքերը. այժմ հեշտութեամբ կարելի է պոստով փոխադրել, երկիւղ չունենալով ճանապարհին կողոպտուելուց (կամ աւելի ճիշտ՝ ինքն իրեն կողոպտելուց)։ Այլ ևս միամիտ գիւղացու հասարակ և դրամական ծրարները զանազան անպատեհութիւնների չեն ենթարկուիլ։ Պոստ. ճիւղի բացումով ապահովւում է և Վարդաշէնի ու Նուխու միջև ձգուող խճուղին, «բնովախտ» ուղի ընկած գիւղացին կարող է ճանապարհի բաւականին յարմարաւոր կայարանում գիշերել և կամ պահնորդախմբից իրեն ուղեկից վերցնել։ Երթևեկութիւնը դիւրանալով հանդերձ և մեծանում է, և այս օգուտը դարձեալ վարդաշէնցունն է. այդ առԹիւ եկող պաշտօնեաների ռոճիկը չէ՞ որ մեծ մասով գիւղումն է մնում։ Քաղաք ուղևորի գնացող գիւղացին իւր դրամը կարող է յանձնել պոստատուն և հետևեալ օրը Նուխում ստանալով ճանապարհի կասկածից ու երկիւղից ազատուել և այլն, և այլն։ Փորձը, կեանքն արդէն ցոյց է տալիս դրամի երկու կողմն էլ։

Քանի մի խօսք ևս պոստատան մասին. պոստը տանում են ու բերում են հեծեալների ուղեկցութեամբ, որոնք պարտաւոր են կայարանից կայարան պոստն իրար յանձնել. Վարդաշէնից 2 հեծեալ պիտի հասցնեն առաջի կայարանը, բայց այդպէս չեն անում. խօսք մէկ արած՝ դրանցից մէկն առհասարակ միշտ իւր գործին է գնում, կարծելով Թէ մի հեծեալով էլ բանը եօլա կըգնայ. այդ մեծ սխալ և անկանոնութիւն է. ճանապարհին պոստին շատ բան կարող է պատահել, և մի հեծեալն ու ժութ բերան սրով զինուած պօշտալեօնը նեղը կընկնեն։ Այս անկանոնութեան առաջը պէտք է առնել։

Վարդաշէնից Նուխի հազիւ 35 վերստ լինի, և այդ տարածութեան համար կառապանին ժամանակ է տրուած [...] ժամ, որ չափազանց շատ է. դրա տևանքն է դանդաղկոտութիւն. [...] ժամում տոքով էլ կարելի է Նուխի հասնել։

Մեր պոստատունը չունի և ցը[...] անշուշտ այդ ևս մի անյարմարութ[իւն] է, Թէև դրա առաջն առայժմ դժ[ուար] Թէ կարելի լինի առնել։

*

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի Թղթակցից)

—

ՊԱՐԻԶ, 9 յուն. (ն. տ.).—Ֆրանսիական մամուլի հայեացքները մօտ ապագայի վերաբերմամբ ընդհանրապէս յոռետեսական են։ Իւր բոլոր Թերութեանց և փոփոխականութեան հետ ֆրանսիական մամուլը մի յատուկ ա[...] ժանաւորութիւն ունի.—որչափ էլ [...] տարուան ընթացքում նրա իւրաքանչիւր օրգանի իւրաքանչիւր տողի տակ[ից] երևում է այս կամ այն կուսակցութեան շահի ծայրը, այնչափ այդ օրգանները սկսում են Թէ ներքին և Թէ արտաքին, մանաւանդ արտաքին հարցերի վրայ նայել կատարեալ օբեկտիւ աչքո[վ]. Որոշ կուսակցութեան լրագիրը, որ ամբողջ տարուան ընթացքում աշխատ[ում] է հակառակ կուսակցութեան վար[կը] ձգել ամեն կերպ, հարուածելով ն[րան] ամեն մի նոյն իսկ լաւ քայլը, տարուան սկզբում, կեանքի ընդհանուր հաշուետուութեան ժամանակ և, այսպէս ասե[լ], նոր ճանապարհի մուտքի սկզբում խօսում է միայն այն Թերութեանց մասին, որ ունի և ցոյց է տալիս ի[...] պաշտպանած կուսակցութիւնը։ Հ[...] սարակական և նոյն իսկ քաղաքակ[ան] կեանքի յառաջադիմութեան այս նշ[...] նաւոր սխալն արդէն իւրացրել է ֆրանսիական մամուլը։ Ամբողջ տա[րին] կռիւ է, մրցումն ու պատերազմ, [...] տարուան սկզբում հաշիւ անցեալ [տա]րուան, վերանորոգութիւն ոյժերի, ն[որ] խրախուսատուութիւն ապագայի մրցմ[ան] համար։ Մի սխալ, որ վատ չէր լ[ի]նի նոյն իսկ զինուորական տեսակէտի[ց]։ Այսպէս, հասարակապետական, կամ [...] այլ կուսակցութեան պաշտպան և [...] գան լրագիրը ոչ Թէ Թւում է իւր [...] կառակ կուսակցութեան սխալները, [...] բած պարտութիւնները եայլն եայլն, [...] իւր կուսակցութեան այս կամ [...] Թիւր ընթացքը, այդ կուսակցութեան այս կամ այն գիկավարի սխալ քայլե[րը] և այդպիսով հնար է տալիս լաւ կա[...]

—Դուրսը սարսափելի ցուրտ էր։ Մնացած անդամներն ապրում էին այդ մասում, այնպէս որ նրանք մեզ Թողին ու հեռացան։ Ոտով գնալ այնքան երկար ճանապարհ մինչև մեր տունն անկարելի էր, իսկ շրջակայքում կառքեր չկային։ Գլխաւոր ցաւն այն էր, որ փողոցները մութն էին, որովհետև քաղաքը լուսաւորող կապալառուն, յոյսը դնելով ձրի լապտերի վրայ, որին Լուսին են անուանում, լապտերները չէր վառել տուել։

—Եթէ այստեղերքը հիւրանոց կայ, գնանք այնտեղ գիշերենք,—առաջարկեցի ես բարեկամիս։

—Ա՛, լաւ մտածեցիր, միւս փողոցում հէնց մի հիւրանոց կայ։ Գնանք շուտով, Թէ չէ կըսառչենք։

Մտնելով հիւրանոցի դուռն, սկսեցինք դուռը ծեծել։ Քնաթաթախ աչքերը տրորելով սանդուղքներով վար իջաւ սպասաւորներից մէկը—մի Կատու։

—Ազատ սենեակ ունէ՞ք,—հարցրեց բարեկամս։

—Կայ—պատասխանեց Կատուն։

—Դէ բաց արա դուռը։

—Ձեր անցագրները ցո՛յց տուէք՝

—Եղբայր, ինչ անցագիր, պատահմամբ ուշացել ենք, տունները հեռու է. մենք այստեղի քաղաքացիներ ենք։

—Սենեակ չկա՛յ,—ասաց սպասաւոր-Կատուն ու անհետացաւ։

Տեսնելով, որ այստեղ մեզ սենեակ չեն տալու, գնացինք մի ուրիշ հիւրանոց։ Այդտեղ էլ անցագիր պահանջեցին։

—Բարեկամ,—ասաց Աղուէսն սպասաւորին,—հօ չես ցանկանալ, որ մենք փողոցում սառչենք։

—Այդ ձեր կամքն է։

—Եթէ կուզես, վաղը ոստիկան կանչիր, Թող իմանայ մեր ով լինելը։

Այդ էլ չօգնեց։ վերջապէս բարեկամս դիմեց իւր սիրած միջոցին, որ նա argumentum ad crumenam *) էր անուանում։ Այդ միջոցը միշտ օգնում էր, երբ ուրիշ կերպ չէր լինում յամառներին համոզել։

—Ահա այս ոսկին կըստանաս, եԹէ մեզ ներս Թողնես,—և նա սպասաւորին ցոյց տուաւ մի ոսկի, որից խեղճի աչքերը, ինչպէս ասում են, ճիգի-վիգի արին։

Իսկոյն դռները բացուեցին, և սպասաւորը մեզ առաջնորդելով տարաւ վերին պատշգամբը։ Պատշգամբի վերջի ծայրում բաց արեց մի դուռ և մեզ ներս հրաւիրեց։ Սենեակի կահաւորանքը կազմում էին՝ մի մահճակալ, երեսը լուանալու մի աման և մի Թախտ։

—Բարեկամ, մի անկողին էլ բեր Թախտի վրայ գցիր,—ասաց Աղուէսը։

Մինչ սպասաւորն անկողին էր բերում, մենք հանուեցինք և լուացուելով կպցրինք պատուհանում դրուած երկու մոմ։ Սակայն շուտով էլի հագնուեցանք, որովհետև անտանելի ցուրտ էր։

—Սենեակն էլ տաքացրու,—ասաց Աղուէսը, երբ սպասաւորն անկողինը բերաւ և փռեց Թախտի վրայ։

Մի քանի րոպէից յետոյ, սպասաւորը վերադարձաւ մի երկու փայտ ձեռին։

—Ցօ, դրանով սենեակ չի տաքանալ,—ասաց Աղուէսը,—գնա մի վեց, ութ հատ բեր։

Վերջապէս սենեակը տաքացաւ, և մնում էր, որ միայն մտնէինք մեր անկողինները ու քնէինք։ Այդպէս էլ արինք։ Բայց մինչև առաւօտ ամեն մի հինգ րոպէից յետոյ տեղներիցս վեր էինք Թռչում։ Բանն այն էր, որ, դու մի ասիր, այդ սենեակում արդէն վաղուց բնակութիւն են եղել հաստատած ուրիշ էակներ—Լուն և Թախտաբիթիթ, որոնք, հիւրասիրութեան և քաղաքավարութեան բոլոր կանոնները մոռացած, խաւարի բողոքում էին մեր դէմ և սաստում էին, որ ձգենք-փախչենք իրենց բնակարանից։ Բայց բնութիւնն իրենն առաւ. որքան էլ որ խիստ էր և կատաղի նրանց յարձակումները, այնուամենայնիւ մենք լաւ Թէ վատ քնեցինք։

Առաւօտեան յանկարծ վեր Թռանք անկողնից։ Մի ինչ որ դժոխային իրարանցում կար պատշգամբում։ Անասունների վազվզոցը, դոյլերի դրնգրնգոցը, զանազան չխկոցներ, ալոկոցներ, տրաքոցներ կարծել էին տալիս, Թէ աշխարհիս վերջն է։

—Ա՜խ, այդ սենեակներն են հաւաքում, ասաց բարեկամս։

—Միթէ չի կարելի, որ մի քիչ հանդարտ հաւաքեն,—նկատեցի ես։

—Գնանք շուտով, գոնէ մեր տանը մի երկու ժամ հանգիստ քնենք,—ասաց բարեկամս։

Զանգը քաշեցինք, մտաւ սպասաւոր[ը]. Բարեկամս հրամայեց հաշիւը բեր[ել]։

Ահա այդ հաշիւը.

Սենեակ	4 ր.
2 մոմ	— 40
1 անկողին ու[...] . .	2 ր.
Լուցկի	15
Անհանգիստ անելու համար	1 ր. 45
4 բաժին վառելափայտ.	8 ր.
Ընդամենը՝	16 րուբ[լի]

Փողը վճարելով, դուրս եկանք հի[...] մաշկողից... Ներեցէք, ուզում էի ա[սել] հիւրանոցից։ Դռնապանը շուտով [...] համար կառք ճարեց և մի ժամուց [յ]ետոյ արդէն ինձ մօտ էինք։ Ծառան մի հրաւիրատոմս տուաւ ինձ, բայց մ[ենք] այնպէս յոգնած և կիսաքուն էինք, [որ] մինչև անգամ հրաւիրատոմսի երեսն [էլ] չնայեցինք, այլ իսկոյն հանուելով [...] տանք անկողին և մի անուշ խոր ք[ուն]ի մէջ ընկղմուեցինք։

Կոմս Դէլլա Զէյրանիերի

*) Համոզմունք փողապանակի միջոցով։

մակերպելու իր մըցական ոյժը:

Ահա 1900 թուականի 9 րդ օրն է, և Պարիզի գրեթէ բոլոր աչքի ընկնող թերթերը գործում են այդ ուղղութեամբ, խօսում են այդ սխանեմով:

Շատ երկար ու ձանձրալի կլինէր թուել մի առ մի դրանց կարծիքները մօտիկ ապագայի մասին, ուստի և մենք բաւականացանք այդ կարծիքները բնորոշելու համար ասել, որ նրանք ընդհանրապէս պէսսիմիստական են:

Մասնաւորապէս Ֆրանսիայի խաղաղութիւնն ապահովուած չհամարելով նրանք ամենքն էլ, շատ քիչ բացառութեամբ, ինչ-որ մեծ վտանգ են նախատեսում ի վնաս ընդհանուր եւրոպական խաղաղութեան:

«Les Annales» քաղաքական-գրական շաբաթաթերթը, որ Պարիզի մամուլին անսովոր լրջութիւնն ունի և որ խմբագրւում է Պարիզի ամենաընտիր գրական և քաղաքական ոյժերի մասնակցութեամբ, շատ մօտաւոր վտանգ է տեսնում ի վնաս գիտութեան, արուեստի և ընդհանուր արդիւնաբերութեան: Հակառակ եւրոպական մամուլի այն ընդհանուր կարծիքի, թէ-19 երրորդ դարի վերջին տարին պիտի ծառայէ իբրև շեմք թեւակոխելու գիտութեանց, արուեստից և արդիւնաբերութեան դարը, յարգելի շաբաթաթերթը շատ խորհրդաւոր տոնով ասում է, թէ, չնայելով գիտութեանց տիրապետութեան օգտին ծխուած խնկին, «հորիզոնը շատ ամպամած է, և թէ սպասւում են դէպքեր, որոնք պիտի խանգարեն աւետող յոյսերի իրականացումն»:

Համառօտենք այդ հետաքրքրական կարծիքներն ընդհանուր Եւրոպայի վիճակի մասին:

Ֆրանսիայի վերաբերմամբ անցեալ տարին ամենացաւալի ապացոյցն է, թէ Ֆրանսիան յաղթուած է գերմանական պատերազմի օրից. «այդ տարին մեր՝ ֆրանսիացիներիս համար —ասում է հայրենասէր ժամանակագիրը— միայն փիլանթրոպումն էր մի առժամանակ ընդհատուած ներքին սոսկալի կռիւների, որոնք աւելի են քան զինեալ պատերազմը: Պարլամենտում աւելի հարցաքննումներ կան քան օրէնքներ: Աւելի հայհոյում են միմեանց, քան օրենսդրում: Մամուլը որոշ օրէնք է պահանջում դժբախտութեան դէպքերի (երկաթուղիների վրայ), ոգելից ըմպելիքների, կանանց և մանուկների աշխատանքի վերաբերմամբ, նոյնպէս որոշ օրէնք՝ որ կանոնաւորէ քրէական գործերի դատավարութեան վերաքննութիւնը: Եւ յիրաւի ինչո՞վ բացատրել ամեն օր Ֆրանսիայի, ամեն կողմերը դարմանալի արագութեամբ կրկնուող սոսկալի դժբախտութիւնները երկաթուղիների վրայ, չլսուած բարբարոսութիւնները բանուոր կանանց և երեխաների դէմ և ամեն օր կրկնուող դատարանական սխալները, եթէ ոչ որոշ օրէնքի բացակայութեամբ: Սոսկալի գործադուլը, որ այժմ հրդեհի պէս պաշարել է հիւսիսային և արեւմտեան Ֆրանսիան, գրեթէ ամեն նիստում վէճի և կռուի — ու միմեանց հայհոյելու նիւթ է պարլամենտի անդամների մէջ, որոնք, որոշ օրէնքի բացակայութեան պատճառով, չեն կարողանում ոչ մի միջոց ձեռք առնել մի քանի տասնեակ ու հարիւրեակ հազար բանուորների եղբայրասպան յարաբերութիւնները կանոնաւորելու: Գործարանատէրերը դիմում են զինուորական վարչութեան ու զինուոր պահանջում, իսկ բանուորները դիմում են ոչ թէ պարլամենտին, այլ կուսակցական որևէ պետի ինչպէս՝ օրինակ՝ Ժորէսին, որ աւելի շատ իր աշօրինների ընդհանրացման մասին է մտածում հանգամանքներից օգտուելով, քան տասնեակ հազար մարդկանց ապրուստի ապահովութեան մասին:

Ֆրանսիական մամուլը իր հայրենիքի ներսը քաղաքականութեան մէջ ևս միայն անյաջողութիւն է տեսնում. դրան իբրև ապացոյց բերում են Չինաստանում և Աֆրիկայում իրենց շահերի բեկբեկումը:

Անցեալ տարին երջանիկ էր համարում միայն ռուս ժողովրդի համար իր Սիբիրեան երկաթուղով, որի կառուցումն ֆրանսիական մամուլը մի նոր զարգացում է անուանում ռուսական պատմութեան և յառաջդիմութեան համար:

Աւստրիայի ներքին յառաջդիմութիւնը կանգ է առել շնորհիւ անընդհատ պարլամենտական կռիւների:

Գերմանիայում կայսրը ջանում է հաստատել զինուորական օրէնքը և ընդլայնացնել իր ծովային սոսկալի զօրութիւն հաստատելու ծրագիրը:

Սպանիան չուառած ու թուլացած Կատալոնիայի շարժումներով, իր քայքայուած դրամական միջոցներն ուղղելու համար, ստիպուած է իր կալուածական հարստութեան վերջին ծաղիկն իսկ գերմանացիներին թողնել:

Բելգիան ընտրական օրէնքի առթիւ վէճերի պատճառով, յեղափոխութիւնից երկու մատ հեռաւորութեան վրայ է կանգնած:

Սերբիան տակն ու վրայ է լինում մի սոսկալի դատով, և այնտեղ անցք են ունենում այնպիսի տեսարաններ, որոնք միջին դարին են արժանի:

Անգլիան, չնայելով իր դարևոր փառքը անուան, իւր զօրաբանակների անցեալ հրաշալի յաղթութիւնների, իր գեներալների անցեալներում ցոյց տուած պատերազմական հանճարին, իր դրամական անհամեմատելի հարստութեան, իր ընդհանուր գերազանցութեան, այսօր յետս է կասում մի գաճաճի (pygmée) առաջ. բայց գաճաճ՝ որ բնազդմամբ պատերազմիկ է, հերոս է, որ յաղթում է՝ մեր որ կամենում է յաղթել: Եւ այդ ազնիւ հերոս գաճաճի ինքնուրոյնութիւնը ոչնչացնելու համար, Անգլիան այսօր, հեռանելով զգուշութեան և աշխարհակալական քաղաքականութեան, ստիպուած է կազմակերպել զինուորական այնպիսի մի սոսկալի անհագին ոյժ, որի նմանը նա երբէք չէ կազմակերպել Նապոլէոնի օրերից մինչև այսօր:

Թիւրքիան.— Թիւրքիան փտել է արդէն ներքուստ կատարելապէս, ու շատ սակաւաթիւ տարրերը, որոնք դեռ առողջ են մնացել այդ փտութիւնից ըշտապով խոյս են տալիս, որ առաջին հարմար հարուածից փլատակների տակ չմնան:

Ներկայ յօդուածով մենք աշխատեցինք միայն ամփոփել, հնար եղածին չափ համառօտ, այն կարծիքները, որ ունի ֆրանսիական մամուլը Եւրոպայի արդի վիճակի մասին: Ինչպէս տեսնում է ընթերցողը, այդ բաւական ճիշտ հայեացքների հիման վրայ շատ դժուար կլինի ասել, թէ ներկայ տարին մի նախադուռն է, որ պիտի տանէ Եւրոպան դէպի գիտութեան, արուեստից և ընդհանուր արդիւնաբերութեան յաղթանակը:

Ս. Հախումեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՄԱՀԵՐՍՓՈՆՏԵՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Լօնդոնի լրագրներում տպուած են անգլիական զինուորների նամակներ, որոնց մէջ զանազան հետաքրքրական մանրամասնութիւններ են հաղորդւում Մահերսֆոնտենի մօտ բրիտանական զօրքերի կրած պարտութեան մասին: Ահա թէ ինչ է գրում մի զինուոր:

«Լուսադէմին մեզ սեղմած շարքերով առաջ տարան, և մենք պէտք է յարձակումով վերցնէինք մի դիրք, որը բոլորովին անմատչելի էր: Այսպիսի պայմաններում յարձակում գործելը, մանաւանդ երբ ամենևին տակտիկա չկայ, երբէք լաւ հետևանք չի ունենում և սարսափելի կորուստներ է պատճառում: Այդպէս էր և այս դէպքում: Ինձ համար անհասկանալի է, թէ ինչպէս կարող էր Մեթուէնը յոյս ունենալ, որ մեր շարք զօրքը կարող է վերցնել մի զօրեղ դիրք: Դա մի լեռ էր, որ բուրերն ամրացրել էին դեռ ևս երկու տարի առաջ և որտեղ, նրանց ասելով, իրենք կարող են դիմանալ առնուազն վեց ամիս: Ամբողջ լեռը ծածկուած է ստորերկրեայ անցքերով, և բուրերն այդ անցքերից դուրս են գալիս իրենց մեծ թնդանօթների մօտ, ուրպէսզի լցնեն, և լցնելուց յետոյ իսկոյն նորից թագնւում են իրենց ծակերում:

«Ինչո՞ւ զօրքն առաջ շարժուեց սեղմած շարքերով: Դա պատերազմական արուեստի բոլոր կանոններով կատարուել չէր, այլ մի կատարեալ ինքնասպանութիւն: Մեր մարդիկ խճճուում էին երկաթալարերի մէջ, և գնդակները բառիս բուն նշանակութեամբ ծակծկում էին նրանց մարմինները: Մենք լսեցինք, որ մեր յարգելի գնդապետը (Ուանչոպ) վիճել էր լորդ Մեթուէնի հետ պատերազմական գործողութիւնների ծրագրի մասին այն ժամանակ, երբ դեռ ևս չէինք դուրս եկել բանակից, բայց Մեթուէնը նրան ասել էր, թէ նա պէտք է միայն հնազանդի իր հրամաններին, և ուրիշ ոչինչ: Դէ-Աարում ասում են, թէ գնդապետ Ուանչոպը կանխատեսում էր դժբաղդութիւնը և Մեթուէնին նկատել էր, որ նա մեծ սխալ է գործում առաջ շարժուելով առանց յառաջապահների, բայց Մեթուէնը մեծամտութեամբ պատասխանել էր, թէ հրամանատարն ինքն է: Տարակոյս չկայ որ լորդ Մեթուէնին այժմ ամենքն ատում են իր զօրքերը: Զարմանալի չի լինի, եթէ ասեմ, որ մեր մարդիկ վախենում են իրենց կեանքը յանձնել նրա պաշտպանութեանը:

«Սեղմած շարքերով յառաջանալն, ի հարկէ, մեծ սխալմունք էր: Նոյնպիսի սխալմունք էր նաև այն, որ առաջուց խուզարկութիւն չէր կատարուած, և թշնամու դիրքը յայտնի չէր: Սակայն յիշատակութեան Մեթուէնի իր զօրքին ուղղած ճառից երևում է, որ նա յաղթութիւնն այնուամենայնիւ հնարաւոր էր համարում, եթէ նահանջ տալու թշուառ հրամանը չլինէր, որ յայտնի չէ, թէ ով էր տուել:

«Մէկը բղաւեց՝ «Յե՛տ նահանջել», մինչդեռ միւսներն աղաղակում էին՝ «Ո՛չ, յառա՛ջ»: Այսպիսի հակասական հրամանների շնորհիւ խառնաշփոթութիւն ընկաւ և սկսուեց մի ընդհանուր իրարանցում: Ամեն ինչ խառնուեց. չէր կարելի որոշել, թէ որտեղ էին գտնւում սպաները, սերժանտները և այլն: Մենք երեք անգամ նորոգեցինք յարձակումը, բայց ապարդիւն: Մեր սպաների մարդիկ հրացան էին պարպում մեր ետևից բուրերի վրայ և ի հարկէ գնդակները մերոնց էին դիպչում: Ես չգիտեմ, թէ որ գնդին էին պատկանում այդ հրացանաձիգները, բայց յանաւս օրի հասցրին մեզ նրանք: Ես կարծում եմ, որ մենք ոչ նուամենայնիւ կարող կլինէինք վերջ ի վերջոյ վերցնել դիրքը, եթէ չլինէր այդ բանը և մէկ էլ այն, որ մենք պէտք է առաջ անցնէինք երեք շարք ձգուած փշածածկ երկաթալարերի միջով: Բայց ինչ կարող էինք անել: Մութն էր: Բան չէր երևում. մարդիկ չէին իմանում, ուր են գնում, բայց գնդերը գիտէր այդ, և մեզ ոչխարների պէս տարան մորթելու: Մէկը բղաւեց, «Յե՛տ նահանջեցէք», և մենք հնազանդեցինք, այսինքն, աւելի ճիշտը, դա նահանջ տալ չէր այլ փախուստ. 4000 հոգի ոչխարի հօտի պէս փախչում էին իրենց թանկագին կեանքը փրկելու համար: Գրեթէ գերիներից մէկը դէպի աջ նայելով, տեսաւ, որ դաշտում փոշի է բարձրանում, և կարծեց, թէ այդ բուրերն են դուրս եկել իրենց ամրութիւններից: Այն պան, որին նա տալ այդ բանը, նայեց հեռադիտակով և հաւատացրեց, թէ դա մեր հեծելազօրն է արշաւում առաջ, որ թշնամու փախուստի ճանապարհը փակի: Բայց ինչպէս դրանք հայլենդերներն էին, որոնք փախչում էին պատերազմի դաշտից գլուխները կորցրած: Ոչ մի սպայ չէր կարողանում պահել նրանց, և նրանք թնդանօթները ձգեցին պատերազմի դաշտում առանց որևէ պաշտպանութեան:

«Գնդապետ Ուանչոպն ընկաւ թշնամու գնդակահար, բայց մեռնելիս և իր բազմաթիւ վէրքերից արիւնաքամ լինելիս, բարձրացաւ ծնկների վրայ և շնչասպառ լինելով ողջունում էր իր զինուորներին, որ չփախչեն: Սպաներն ու զինուորներն ընկնում էին շուրջը, բայց նրանք առաջ էին գնում ուղղակի դէպի մահուան բերանը: Խճճուելով անիծուած երկաթալարերի մէջ, նրանք դէս ու դէն էին ընկնում ծուղակն ընկած գայլերի պէս, իսկ այդ միջոցին թշնամու գնդակները սուլելով անցնում էին նրանց ականջների մօտով: Վերջապէս նրանք նահանջ տուին կատարելապէս յուսահատուած, պատերազմի դաշտում թողնելով գրեթէ 1,300 հոգի սպանուած և վիրաւորուած»:

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԼՈՆԴՈՆ, 11 յունուարի.—Լօրենցո-Մարկեզից, յունուարի 10 ից,«Times»-ին հեռագրում են, որ հարաւ-աֆրիկեան հասարակապետութիւններից այդտեղ շատ քիչ տեղեկութիւններ են գալիս, բայց ասում են, որ Պրետորիայում մեծ երկիւղ է տիրում: Տարակոյս չկայ, որ եւրոպական ցամաքային պետութիւնների անտարբերութիւնը խիստ հիասթափեցրել է բուրերին:

«Daily Mail»-ին Դուրբանից, յունուարի 10-ից,հաղորդում են,որ անկանոն զօրքերի հրամանատար շատ սպաներ հրաժարուել են իրենց պաշտօններից, որովհետև կռուել են կանոնաւոր զօրքի սպաների հետ, և մեկնում են Կապըշտադ իրենց կանգառները յայտնելու աւագ կոմիսար Միլներին:

«Daily Télégraph»-ին հաղորդում են, թէ Ռենսբուրգից, յունուարի 10 ից, ստացուած է հետևեալ տեղեկութիւնը. «Անյայտ պատճառներով բուրերը երեկոյեան ժամի 9 ին իրենց գլխաւոր դիրքի ամբողջ գծի վրայ չափազանց զօրեղ կրակով հրացաններ էին պարպում, որը տևեց 3/4 ժամ. ընդ սմին պարզ նկատւում էին մէկը միւսի ետևից հրացան պարպողների երեք շարք»:

Պաշտօնական աղբիւրից «Daily News»-ին հաղորդում են, որ զինուորական մինիստրութիւնը որոշել է Հարաւային Աֆրիկա ուղարկել ուլանների 17 րդ, գուսարական դրագունների 7-րդ և հեծեալների 4 րդ գնդերը, որոնք արդէն կերպանաւած են:

ԴՈՒՐԲԱՆ.—Լէզի Սմիթում տիֆից և դիսենտերիայից մեռնում են օրական մինչև 10 հոգի:

ՊԻՏԵՐՄԱՐԻՑԲՈՒՐԳ.—Այստեղ լուր տարածուեց, թէ Դինդոնալդը 1600 հոգուց բաղկացած զօրքով մտել է Լէզի-Սմիթ: Այդ լուրը չհաստատուեց:

ԼՈՆԴՈՆ, 12 յունուարի. — Վերին Տուգելայի վրայ գտնուած բուրերի բանակից հաղորդում են, որ յունուարի 6 ին անգլիացիները նորոգել են բուրերի դիրքերի ռմբակոծութիւնը, մանաւանդ գետից անցկացրած թնդանօթներով: Կէս օրից յետոյ ռմբակոծութիւնն անսովոր կերպով զօրեղ էր. թնդանօթների թեարկութեան տակ անգլիական հետևակ զօրքը երեք շարքով հասաւ փոքրիկ բլուրների մինչև երկրորդ շարքը և գրաւեց այն՝ մութն ընկնելիս, բայց յետոյ նահանջ տուեց դէպի առաջին դիրքը: Գիշերուայ ընթացքում անգլիացիները բաց էին թողնում հրթիռներ լուսատու աստղերով և օդապարիկներ, որպէս զի տեսնեն գետն ի վեր եղած դիրքերը:

Յունուարի 7-ի առաւօտը նորոգուած էր ռմբակոծութիւնը ծովային թնդանօթներով, բայց անյաջող:

Յունուարի 7-ից, բայց աւելի ուշ «Ռէյտ. գործ»-ը հաղորդում են, որ անգլիացիներն այժմ երեք դիրք ունին բռնած Տուգելայի երկարութեամբ: Ծովային թնդանօթները պարպւում ծայր ունեցող ռումբեր են արձակում: Երբ տեղեկութիւն ստացուեց, թէ անգլիական 2000 հեծեալներ աշխատում են Դրակենսեան լեռների մօտով բուրերի ետևն անցնել, վերջիններս մի բազմամարդ պահակախումբ ուղարկեցին խուզարկելու համար: Միայլ հասկանալով յառաջապահների ազդանշանը՝ պահակախումբը դուրս եկաւ բլրի վրայ, որտեղ յանկարծ նրա դէմ սարսափելի կրակ տեղաց հրացաններից և Մաքսիմի թնդանօթներից: Բուրերից սպանուեց 14 հոգի և վիրաւորուեց 20: Անգլիացիների կորուստները, հաւանականաբար, աննշան են:

ԼՈՆԴՈՆ.—Արտասահմանում տարածուած այն լուրերի առթիւ, թէ Բուլլերը պարտութիւն է կրել և թէ Դենդոնալդը 1600 մարդկանց գլուխ անցած մտել է Լէզի-Սմիթ, զինուորական մինիստրութեան ստացած բացատրութիւններից երևում է, որ մինիստրութիւնը ոչ այս և ոչ այն լուրին հաւատ չի ընծայում: Կարծում են, թէ այդ լուրերը բաց են թողնուած բուրական նպատակներով: Բուլլերից կամ Լէզի-Սմիթից վճռական տեղեկութիւնները մինիստրութիւնը չի սպասում 2—3 օրից վաղ, արդէն այն պատճառով, որ Բուլլերի գործողութիւններն անհրաժեշտօրէն ընդարձակ բնաւորութիւն ունին:

Վերին Տուգելայի վրայ գտնուած բուրերի բանակից «Ռէյտ. գործ.»-ը հեռագրում են յունուարի 1 ից, որ բրիտանական զօրքերի կեդրոնական դիրքը գտնուում է Չուարցկոպջէֆաի մօտ, որտեղ նրանք բռնած ունին Դիւէ գետի երկու ափն էլ: Գետի վերևը, այն է՝ Ցունիլեսի մօտ, նրանք կամուրջ են ձգել գետի վրայ և կենսական մթերքների մեծ ամբար են շինել: Չուարցկոպջէֆաի գագաթին բրիտանացիները դրել են ծովային 5 թնդանօթ և դաշտային մի ամրաձիգ գունդ անց են կացրել գետից ու կանգնեցրել են մի փոքրիկ բլրի վրայ, որտեղից անդադար սաստկապէս կրակում են բուրերի ամրութիւնները: Այդ ռմբակոծութեան պատճառած կորուստներն աւելի շատ են, քան Կոլենզոյի մօտ:

ԼՈՐԵՆՑՈ-ՄԱՐԿԵԶԷ. Բուրերի բանակից ստացուած տեղեկութիւններից երևում է, որ յունուարի 10-ին «Երկաթ-Թամասի» ռումբերը քանդել են Ուայտի և Գունտերի բնակարանները. մարդ սպանուա՞ծ է թէ՝ ոչ, յայտնի չէ:

Լէզի Սմիթի մօտ եղած բուրերի գլխաւոր բանակից հեռագրում են յունուարի 10-ից, որ շաբաթ օրուանից Օլիվիէնշտոկ տանող ճանապարհի վրայ կատաղի ճակատամարտ է տեղի ունենում Պրետորիուսի բուրերի և անգլիական զօրքի միջև: Կռիւը կեդրոնանում է Սպիոնսկոպի շուրջը: Այնտեղ են ուղարկուած բուրերի զօրախմբեր, Բոտը և Կրոնիէն: Նախագահ Շտայնը գտնւում է կրակի գծի վրայ:

ՊՐԵՏՈՐԻԱ.—Բուրերի դիրքը Կոլենզոյի մօտ կիրակի առաւօտ խիստ յարձակման ենթարկուեց թշնամու կողմից. մի կատաղի կռիւ փրթեց, որի ելքը յայտնի չէ: Վերջին տեղեկութիւններից երևում է, որ բուրերը պահպանել են իրենց դիրքերը: Պրետորիայում Կոլենզոյից, յունուարի 6 ից, հեռագիր է ստացուած, որ 300 հոգուց բաղկացած բուրերի խուզարկու մի զօրախումբ փէլդկորնետ Օպպերմանի հրամանատարութեան տակ շրջապատել

էր անգլիացիներով, բայց ճեղքել անցել է Թողնելով, ինչպէս լուում է, 4 սպա նուած և 30 վիրաւոր, որոնք դերի են ընկել։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԹՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(*Սոլոլակ, Սաղովայա փողոց*, № 64)

(*սեպհական տուն*)

Հեռաձայն № 130

Նպաստել հիւանդների ընդհանուր ըմ դունելութեան հրկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամ 2---4-ը յատկապէս. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մանաւանդ ընդունելութեան ամենայն օր՝ ժամը 8---10 առաւօտեան---վճարը 2 ր.։ Երէքօթեայ հիւանդները և ծննդաբերը կանոնաւոր ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշուած է ըստ դասակարգերի։ Հիւանդները տուն են։ Դիւանկոլոգիայի բաժանմունքը վճարում են 1 մ. 50 կ. մինչև 8 ր. մի օրուայ գիշերուայ ըհամար. ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից. պատուհիտը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութեան ըստ համաձայնութեան ժամանակ ձրի։ Հիւանդների համար 1 ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղուտում են նրանք տեսչի և նրա պ. պ. նկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

—

ՎԼԱԴԻԿԱՒԿԱՉԻՑ ՄԵԿՆՈՒՄ ԵՆ

Հինգ տեղ ունեցող կարեթները Առաջին - առ. 7 ժ. գիշերում է Մլէթում, Թիֆլիս հասնում է հետեւեալ օրը. 6 ժ. 30 ր., երկրորդը - առ. 9 ժ. գիշերում է Դուդարում, հասնում է Թիֆլիս հետեւեալ օրը. 7 ժ. 55 ր Վեց տեղ ունեցող օմնիբուսներ առանց դիշերելու. առաջին առ. 11 ժ Թիֆլիս հասնում է հետեւեալ օրը կէս 1 ժ. 20 ր., երկրորդը—կէս. 8 ժ., հասնում է Թիֆլիս հետեւեալ օրը կէս. 10 ժ 15 ր.։

Լինէյկա, առանց գիշերելու,—կէս. և ժ., հասնում է Թիֆլիս հետեւեալ օրը 3 ր6 ժ. 10 ր.։

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է կէս. 4 ժ. 15 ր., հասնում Թիֆլիս առ. 8 ժ. 40 ր., Թիֆլիսից Բաթում մեկնում է առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում կէս. 8 ժ 32 ր.։

Մարդատար № 3 գնացքը Բագուից Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., Թիֆլիս հասնում է կէս. 6 ժ. 38 ր., Թիֆլիսից Բա[illegible] մեկնում է կէս. 7 ժ. 37 ր., հա[illegible] է Բաթում առ. 8 ժ. 12 ր.։

Մարդատար № 2 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է առ. 9 ժ. 15 ր., Թիֆլիս հասնում է կէս. 8 ժ. 53 ր, Թիֆլիսից Բագու մեկնում է կէս. 9 ժ. 23 ր., Բագու հասնում է կէս. 11 ժ. 40 ր.։

Պատային № 4 գնացքը Բաթումից Թիֆլիս մեկնում է կէս. 9 ժ. 05 ր. Թիֆլիս հասնում է առ. 9 ժ. 45 ր. Թիֆլիսից Բագու մեկնում է առ. 11 ժ 25 ր., Բագու հասնում է առ. 6 ժ.։

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԱՍԱՆ

եւ ուղարկուց բոլոր բաժանորդներին

„ԼՈՒՄԱՅ“

գրական հանդիսի 1900 թ. (V տ.) առաջին գիրքը (440 երես)։

Մեր հայերէն պատի օրացոյցն ապահոված լինելով՝ խնդրում ենք գաւառների գործակալներից վերադարձնել շուտով անվաճառ մնացածները։

(208) Տէտ ա. բա՝. Գ[illegible]ան 1—1

ԱՐՏԱՀԵՍ ՉՈՄԱՐԵԱՆ, ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ԹՈՒՄԱՆԵԱՆ, ԱՒԵՏԻՔ ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆ

Աւարտելով պ. Կարա-Մուրզայի մօտ իմքապետական կուրսերը՝ կարող են կազմել քառաձայն խումբ, նոտաներ սովորեցնել նրան, Մ. Եկմալեանի նեդաշնակած պատարագը եռաձայն կամ քառաձայն պատրաստել, կառավարել և խումբը միշտ կազմ պահել ծանկացողները դիմեն՝ Тифлисъ, 1) Норашейск. ул. № 4 А. Чомаряну, 2) Сололаки, Гановская ул. № 25 кв. Теръ-Акопова А. Манукяну, 3) Абасъ Абатская пл. кв. Самуэляца А. Туманяну, 4) Железный рядъ, Ав. Акопджаняну *կամ Կարա-Մուրզային՝* Разъѣзжая ул. № 9.

(211) 2 - 1

Հոյս տեսան

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1900 Թ.

ԾՈՑԻ ԵՒ ՊԱՏԻ

(*Շիրակ*)

ՕՐԱՑՈՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարուած է հայ մի քանի գործիչների պատկերներով, ունի նոր յաւելուած, ընդարձակ բժշկարան, հարուստ երազահան և նոր զուարճալի վիճակարան։

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ, նոր ծիծաղաշարժ առակներ՝ մոլլա Նասր-Էդդինից, Դալի-Քէչիչից, Պըլբըլուղուց, այլ և ժողովրդական առածներ, գիւղական լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, ժողովրդական երգեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ. բժշկական, անտեսական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքրիր տեղեկութիւններ։

Գները՝ ծոցինը—20 կ., պատինը—50 կ.։ Գումարով պնդողներին լինում է զիջում. Դիմել՝ Александрополь Карапету Апиніанъ. *կամ* Alexandrople Karapet Apinian (Caucase)

(150) 20 – 18

Ա՛Ի ԳՈՐԾԱԿԱԼ (ապհատ)

ՂՐԻՄԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ

(Սև ծովի) ափերում ՄԱՐԴԱՆՈՑՆԵՐ առնել ցանկացողներին առաջարկում է դիմել իրեն. ծախու ամրանոցներ կան։

Հարցնել «Նոր-Դար»-ի խմբագրատունը։

(դ.) 20 - 8

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՌՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆիսհարմոնիումներ, Չելեակներ, կլէտաներ, Ֆլէյտներ, կլարնետներ, ձայնախաչեր, լարեր և այլն և այլն։

Բոլոր տեսակ գործիքների համար պինը կարելի է վճարել մաս առ մաս։

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐՆ

ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆ ՁՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՉԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԴԵԳՐՈՒՆԱԿԱՆ

Դ Ե Պ Օ

Ռ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Музыкальное депо

Б. М. МИРИМАНЯНЪ

тифлисъ, дворцовая ул. 36—35

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը իմդրում է պ. պ. անդամներին չնորհ բերել

ՑՈՒՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ,

որ լինելու է շաբաթ, յունուարի 15-ին, երեկոյեան ժամ 10-ին, լուս 1899 թ. հաշիւը, հաստատելու 1900 թ. նախահաշիւը և ընտրելու աւագներ, վերաստուգող յանձնաժողովի անդամներ և նրանց կանդիդատներ, նմանապէս և քուէարկելու կանդիդատներին։ Ընդհանուր ժողովը վերջանալուց յետոյ տեղի կունենայ **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹՐԻ**

(210) *միւզիկով և սազանդարներով։* 2—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ—ՊԱՆՍԻՕՆ

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Յունուարի 2-ից ընդունում է երեկոյեան, կիսաօրեակաւոր և գիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստում է գիմնազիաների, կադետների կորպուսի, գիմնէմէրների, ըէալական, առևտրական և այլ ուսումնարանների համար։

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումն ստացած մանկավարժներ, գիմնազիական ուսուցիչներ։ Կիֆեր, Լիվիցկի, Գոլէնկո, Պետտեցկի և այլն։ Առանձին առարկաներն են—կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն. ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն (ռուսաց և ընդհանուր) պատմութիւն, բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, պար, երաժշտութիւն։ Հասցէն. ТИФЛИСЪ, Гановская ул., № 11. 3-րդ գիմնազիայի մօտ։

(203) 10—3

Բացուած է **1900** *թ. քաժանորդագրութիւնը*

XVIII **ԱՂԲԻՒՐ** XVIII *ու. և* XI *ու.* **ՏԱՐԱԶ** XI

ԸՄԲԱԳՐԻ և ՅԱՐԴԱՐԱՊԱՏԿԵՐՈՎ

12 № № *պատկերազարդ* **ԱՂԲԻՒՐ** *ամսագիր*

12 № № **ՊԱՐԻԶԻ ՄՈԴԱՆԵՐ**

24 № № *Զուտ գեղարուեստական* } **ՏԱՐԱԶ**

50 № № *պրակեան պիտակեան* } **ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴԻ ՇԱԲԱԹԱԹԵՐԸ**

ՊՐԻՄԻԱՆ, *մի մեծադիր շքեղ* ՀԱՆԴԷՍ XIX ԴԱՐ *ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ, որի նման չքիչ հրատարակութիւն հայերիս մէջ դեռ չէ եղած։*

Տարեկան բաժանորդագինը **10** *ր., արտասահման 18 ր. ապահիկ կամ մաս-մաս վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունւում. Աղբիւր ամսագրի տարեկան գինը 3 ր. Տարազինը—6 ր. Յաւելուածներ, Պրէմիաներ, Պարիզի Մոդաները ստանում են Աղբիւր և Տարազ միմիայն հատկով ստացող բաժանորդները։*

Հասցէն՝ Тифлисъ, Редакція иллюстр. жур. Агбюръ-Таравъ. Tiflis (Caucase), Rédaction des jour. Agbur et Taraz.

Խմբ.-հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

(Ֆ.) 3—3

ВѢСТНИКЪ ВИНОДѢЛІЯ

ЕЖЕМѢСЯЧНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1900 Г. (9-Й ГОДЪ ИЗДАНІЯ).

Журналъ выходитъ въ Одессѣ, подъ редакціей ВАСИЛІЯ ТАИРОВА безъ предварительной цензуры, книжками въ четыре печатныхъ листа, по с мой обширной программѣ и при постоянномъ сотрудничествѣ выдающихся нострапныхъ и русскихъ ученыхъ и спеціалистовъ.

„ВѢСТНИКЪ ВИНОДѢЛІЯ“ рекомендованъ Ученымъ Комитетами Министер ства Народнаго Просвѣщенія и Министерства Государственныхъ Имуществъ. Кр мѣ того, ему присуждены: 1] дипломъ перваго разряда—на Всероссійской промы ленной и художественной выставкѣ 1896 года въ Нижнемъ-Новгородѣ, 2] почет дипломъ—на Международной выставкѣ плодоводства виноградія и огородничест 1894 г. С.-Петербургѣ на выставкѣ плодоводства и садоводства Новороссійскаго края 1898 года въ Одессѣ, и 4] серебряная медаль—на Международной промы ленной, художественной и научной выставкѣ 1895 года въ Бордо.

ПОДПИСНАЯ ЦѢНА съ пересылкою и доставкою:

На полгода – 3 р. 50 к., заграницу – 4 р. На годъ – 6р., за границу – 7 р

Имѣется ОГРАНИЧЕННОЕ количество полныхъ экземпляровъ журнала 1892, 1893, 1894, 1895, 1896, 1897, 1898 и 1899 гг ЦѢНА за годъ для лицъ, подп савшихся на „Вѣстникъ“ 1900 года до 1-го числа наступающаго января: 1892 г. 6 р., 1893 г—3 р. 50 к., 1894 г.—3 р. 50 к., 1895 г.—4 р. 50 к. 1896 г. [полные эк земпляры], распроданы], 1887 г.—5 р. 50 к., 1898 г. 5. р. 50 к. и 1899 г.—6 р. П ны показаны съ пересылкою; безъ доставки—на 50 к. дешевле, а за границу—1 р дороже. Съ 1-го января 1900 г. цѣны на могущіе остатья экземпляры журнала бу дутъ повышены.

АДРЕСЪ редакціи журнала „Вѣстникъ Винодѣлія“. Одесса, Канатная, № 13.

БОЛЬШАЯ

1 Р. три мѣс. **1 Р. три мѣс.**

ЕЖЕДНЕВНАЯ ГАЗЕТА И ДВА ИЛЛЮСТРИРОВАН. ЖУРНАЛА

Второе изданіе „Биржевыхъ Вѣдомостей“ и

САМОСТОЯТЕЛЬНЫЙ въ своихъ сужденіяхъ, чуждый тенденціознаго извращенія фактовъ и безусловно независимый органъ печати. Ярко освѣщая всѣ явленія общественной жизни, имѣя отромную сѣтъ корреспондентовъ, эта газета при всоей твердости и неуклонности, справедливая и безпристрастная, уже много лѣтъ является, несомнѣнно.

наиболѣе полнымъ

выразителемъ нуждъ провинціи.

Главные отдѣлы газеты, а въ особенности передовой, политической, столичной и провинціальной общественной жизни съ

ежедневными иллюстраціями.

фельетона, телеграммъ, корреспонденцій и пр.,—по своей полнотѣ и свѣжести совершенно отвѣчаютъ подобнымъ-же отдѣламъ другихъ большихъ столичныхъ газетъ. Въ ней нѣтъ ненужныхъ несвязанныхъ, случайныхъ замѣтокъ а ихъ замѣняетъ

ЖИВОЕ СЛОВО.

еженедѣльные журналы

1] „Новая Иллюстрація“

2] „Огонекъ“

какъ по своему содержанію, такъ и по характеру своихъ иллюстрацій совершенно

новаго для россіи типа.

Въ живыхъ наброскахъ нашихъ художниковъ и корреспондентовъ въ нихъ находятъ свои отраженія всѣ

ЗЛОБЫ ДНЯ.

Въ предстоящимъ году будутъ напечатаны

„Золотой дождь“ романъ Незавимаго І. І. Ясинскаго.

„Булава и бунчукъ“ историч. романъ Д. Л. Мордовцева.

„КОСТРЫ“ повѣстъ К. Случевскаго.

„Нежданно-Негаданно“ романъ Вас.И. Немировича-Данченко.

„На склонѣ вѣка“ романъ К. В. Назарьевой

„Сто лѣтъ назадъ“ историч. романъ Е. Роппа.

и мног. друг.

Главная Контора „Биржевыхъ Вѣдомостей“ С.-Петербургъ, Невскій 28.

ПОДПИСНАЯ ЦѢНА. стораго изданія «Биржевыхъ Вѣдомостей вмѣстѣ съ журналами и съ пересылкою на годъ 4 руб., на 6 мѣсяцевъ—2 руб., на 3 мѣсяца—1 руб. на 1 мѣсяцъ—35 коп.

Въ 1899 году болѣе 70,000 подписчиковъ. 3—1

Дозв. цензурою. Тифлисъ, Янв. 13-го дня, 1900 г. Տպարան Ե. Մելիք Շահնազարեանի. А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ